

**ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆԻ ԳՐԱԲԱՐ ԲՆԱԳՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ
ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆ ՆՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ**

Սույն թվականի հունվարի 17-ից մինչև մարտի 14-ը Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ և Երուսաղեմի հայոց ամենապատիվ տ. Եղիշե սրբազան պատրիարքի հրավերով Երուսաղեմ՝ սրբոց Հակոբյանց վանք մեկնեցին ս. Էջմիածնի հոգևոր անմարանի դասախոսներ Արթուր Հատիտյանը և Պարզև Ծախբազյանը՝ կատարելու գրաբար բնագրից արևմտահայերեն լեզվով իրենց թարգմանած Նոր Կտակարանի տպագրության արագրությունները:

Նոր Կտակարանի վերոհիշյալ թարգմանությանը հավասարապես իր գնահատելի մասնակցությունն է բերել նաև հոգևոր անմարանի դասախոս Սամվել Անթոնյանը:

Թարգմանության ընթացքում օգտագործվել են Նոր Կտակարանի ֆրանսերեն և անգլերեն բնական և գիտական մորազույն թարգմանություններ՝ *La Sainte Bible*, *Eco'le Biblique de Jerusalem Paris, 1956*. „*The Holy Bible*“, Revised Standard Version, New York, Oxford University Press, 1962, „*Nouveau Testament*“, Traduction Oecuménique de la Bible, TOB, Edition Intégrale, 1972, ինչպես նաև օտար լեզուներով գիտական այլ հրատարակություններ:

Նոր Կտակարանի արևմտահայերեն սույն թարգմանության առթիվ թարգմանիչները աչքի առաջ են ունեցել նաև Գաբեգին արքեպ. Խաչատուրյանի Բուենոս Այրեսում հրատարակված Նոր Կտակարանի արևմտահայերեն թարգմանությունը, տ. Ծնորթ պատրիարք Գալուստյանի Կ. Պոլսում հրատարակված չորս Ավետարանների հունարենից կատարված արևմտահայերեն թարգմանությունը, Վեհեփիկի միաբանության անդամ հայր Սրապիոն Ուլուհոնյանի ս. Ղազարում հրատարակված չորս Ավետարանների արևմտահայերեն թարգմանությունը, ինչպես նաև արևմտահայ լեզվով կատարված այլ թարգմանություններ:

Նոր Կտակարանի արևմտահայերեն ներկա թարգմանության համեմատությունը հունարեն, լավ և լավագույն բնագրի հետ, Սուրբ Գրոց Հնկերության հանձնարարությամբ, Լոնդոնում կատարել է Մայր Աթոռի միաբան, դոկտ. Վրեժ սրկ. Ներսիսյանը:

Երուսաղեմի հայոց ամենապատիվ սրբազան պատրիարքը վերանայել և խմբագրել է՝ սույն թարգմանության ամբողջական տեքստը:

Մայր Աթոռի ներկայացուցիչները Երուսաղեմում կատարել են թարգմանության նախնական և կոնտրոլ արագրությունները, հսկել են տպագրական շարվածքին, գրքի տեխնիկական ձևավորմանը և գործը պատրաստել տպագրության համար:

Նոր Կտակարանի ներկա թարգմանության տպագրությունը նախատեսվում է կատարել Եվրոպայում՝ Աստվածաշնչի Հնկերության օժանդակությամբ:

Երուսաղեմի հայոց ամենապատիվ պատրիարք սրբազան հայրը Երուսաղեմում Մայր Աթոռի ներկայացուցիչներին ընձեռեց ամեն դյուրություն և օժանդակություն, որպեսզի լավագույն ձևով գլուխ բերվի սույն կարևոր գործի շուտափույթ հրատարակությունը: Այս առթիվ, հանուն Վեհափառ Հայրապետի, հայտնում ենք մեր խորին շնորհակալությունն ու երախտագիտությունը սրբազան պատրիարք հոր ցույց տված ջերմ ու արտագին օժանդակության համար:

Նոր Կտակարանի արևմտահայերեն արդի թարգմանությունը նվիրվում է Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Հայրապետի գահակալության 25-ամյակին, որը նշվելու է Մայր Աթոռում 1980 թվականի աշնանը:

ԱՐԹՈՒՆ ՀԱՏԻՏՅԱՆ
ՊԱՐԳԵՎ ԾԱՀԲԱԶՅԱՆ